ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2025 թվականի N 484 - Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Շահումյան փողոց 2 հասցեում գտնվող, 26.210.234 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով շինությունները՝ 448,9 քառ. մ մակերեսով անասնաբուժական սպասարկման կենտրոնը, և վերջինիս սպասարկման համար անհրաժեշտ հողամասը՝ հիմք ընդունելով անշարժ գույքի բաժանման արդյունքում ստացված տվյալները (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 26092018-07-0086 վկայական) (այսուհետ՝ գույք 1) հետ վերցնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեից (այսուհետ՝ կոմիտե):

2. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ, Իջևան համայնք, Իջևան քաղաք, Աղայան փողոց 12 հասցեում գտնվող, 42.869.907 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով շինությունները՝ 445,5 քառ. մ մակերեսով վարչական շենքը, 9,54 քառ. մ մակերեսով, 9,54 խոր. մ ծավալով, 23,87 գծամետր չափերով պարիսպը, 1,17 քառ. մ մակերեսով, 0,82 խոր. մ ծավալով, 5,87 գծամետր չափերով պարիսպը, 7,04 քառ. մ մակերեսով, 1,41 խոր. մ ծավալով, 35,24 գծամետր չափերով պարիսպը և դրանցով զբաղեցված 0.13 հա մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 25112024-11-0036 վկայական) (այսուհետ՝ գույք 2) հետ վերցնել կոմիտեից:

3. Սույն որոշման 1-2-րդ կետերում նշված գույք 1-ը և գույք 2-ն ամրացնել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության էկոպա-ռեկային ծառայությանը (այսուհետ՝ ծառայություն)՝ օրենքով և կանոնադրությամբ ծառայությանը վերապահված լիազորությունների և խնդիրների իրականացման համար անհրաժեշտ աշխատանքային պայմանների ստեղծման, ծառայության Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչության և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզային վարչության տեղամասերի տեղակայման նպատակով:

4. Կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում իրակա-նացնել սույն որոշման 1-ին կետում նշված գույք 1-ի բաժանման և որպես առանձին գույքային միավորի պետական գրանցման աշխատանքները.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո երկամսյա ժամկետում, ծառայության պետի հետ համատեղ, իրականացնել սույն որոշման 1-2-րդ կետերում նշված գույք 1-ի և գույք 2-ի հանձնման-ընդունման աշխատանքները՝ հիմք ընդունելով սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականներում առկա տվյալները:

5. Ծառայության պետին՝ սույն որոշման 4-րդ կետով սահմանված հանձնման-ընդունման աշխատանքները կատարելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել գույք 1-ի և գույք 2-ի նկատմամբ իրավունքների պետական գրանցման (հաշվառման) աշխատանքների կատարումը՝ ծախսերն իրականացնելով ծառայության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ